

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հ/Հ	Անվանումներ	Նկարագրերը
1.	Մասնագիտության անվանումը	Էլեկտրատեխնիկ-մեխանիկ՝ երկաթուղու էլկտրաքարշի տեխնիկական շահագործման
2.	Դերը	Էլեկտրաքարշի վերանորոգում, սպասարկում և շահագործում
3.	Խնդիրները	Էլեկտրաքարշի անսարքությունների հայտնաբերում, տեխնիկական սպասարկման, շահագործման ու նորոգման կազմակերպում, աշխատանքային գործընթացների իրականացման ժամանակ անվտանգության պահպանում:
4.	Աշխատանքային գործընթացները	
4.1.	Աշխատանքային գործընթաց 1.	Էլեկտրաքարշի անսարքությունների հայտնաբերում
4.2.	Աշխատանքային գործընթաց 2.	Էլեկտրաքարշի տեխնիկական սպասարկում
4.3.	Աշխատանքային գործընթաց 3.	Էլեկտրաքարշի նորոգում
4.4.	Աշխատանքային գործընթաց 4.	Էլեկտրաքարշի տեխնիկական շահագործում
4.5.	Աշխատանքային գործընթաց 5.	Ընթացքի ժամանակ գնացքի անսարքության հայտնաբերում
5.	Աշխատողին ներկայացվող պահանջները	
5.1.	Լեզուների իմացություն	<ul style="list-style-type: none"> • Հայերեն՝ գերազանց • Ռուսերեն՝ C1 • Երկրորդ օտար լեզու՝ B1
5.2.	Համակարգչի իմացություն	<ul style="list-style-type: none"> • MS Word՝ գերազանց • MS Excel՝ լավ • MS PowerPoint՝ բավարար • Internet Explorer՝ լավ
5.3.	Մասնագիտական գիտելիքներ	<p>Պետք է իմանա՝</p> <ul style="list-style-type: none"> • դեպի ժամանած էլեկտրաքարշի տեխնիկական գնման և անսարքությունների հայտնաբերման կարգը, վերանորոգման տեսակները և դեպոյից մեկնող էլեկտրաքարշի սպասարկման կարգը, • էլեկտրաքարշի անսարքությունների նորոգման տեխնոլոգիական գործընթացը, • արգելակման սարքերի փորձարկման տեսակները, • էլեկտրաքարշի էլեկտրասարքավորումների անխափան աշխատանքի սկզբունքները, • համապատասխան փաստաթղթային գրառումներ կատարելու և հաշվետվություններ ներկայացնելու կարգը, • լոկոմոտիվային տնտեսության առանձին տեղամասերի գործառույթները և աշխատողների պարտականությունները, • վերանորոգված էլեկտրաքարշի որակավորման չափանիշները և շահագործման թույլտվության կարգը,

Հ/Հ	Անվանումներ	Նկարագրերը
		<ul style="list-style-type: none"> • աշխատանքի անվտանգության կանոնները, • կայարան ժամանած գնացքի ընդունման և սահմանափակման կարգը, • էլեկտրաքարշի տեխնիկական սպասարկման աշխատանքների կատարման կարգը, • էլեկտրաքարշի դետալների և հանգույցների մաշվածության աստիճանի որոշման եղանակները, • էլեկտրաքարշի տեխնիկական շահագործման կանոնները, • էլեկտրաքարշի արգելակման համակարգերի փորձարկման վերահսկողության կարգը, • էլեկտրաքարշի արգելակման համակարգերի փորձարկման վերահսկողության կարգը գնացքի կազմում:
5.4	Մասնագիտական կարողություններ	<p>Պետք է կարողանա՝</p> <ul style="list-style-type: none"> • կատարել էլեկտրաքարշի արգելակման համակարգերի փորձարկման վերահսկողության կարգը, • կատարել անսարքությունների չափումներ և որոշել պահանջվող վերանորոգման աստիճանը, • հայտնաբերել անսարքությունները, վերանորոգման տեսակները և սպասարկել դեպոյից մեկնող էլեկտրաքարշը, • կազմակերպել և հսկել էլեկտրաքարշի անսարքությունների վերանորոգման աշխատանքները, • կատարել արգելակման սարքերի փորձարկումներ, • կազմակերպել էլեկտրաքարշի տեխնիկական սպասարկման աշխատանքները, • իրականացնել հսկողություն տեխնիկական սպասարկման աշխատանքների ընթացքի նկատմամբ, • կազմակերպել էլեկտրաքարշի տեխնիկական շահագործումը, • իրականացնել գնացքի արգելակման համակարգերի փորձարկման վերահսկողությունը, • ապահովել անվտանգության կանոնների պահպանումը էլեկտրաքարշի տեխնիկական շահագործման, զննման և նորոգման ընթացքում, • ստուգել վերանորոգված էլեկտրաքարշը:
6.	Պատասխանատվության աստիճանը	<p>Երկաթուղու էլեկտրաքարշի տեխնիկական շահագործման էլեկտրատեխնիկ-մեխանիկը պատասխանատու է էլեկտրաքարշի արդյունավետ վերանորոգման, սպասարկման, տեխնիկական շահագործման և անվտանգության տեխնիկայի պահպանման համար: Գործում է ինքնուրույն կամ ավելի բարձր որակավորում ունեցող մասնագետի ղեկավարությամբ: Բոլոր պարտականությունները կատարում է երկաթուղու էլեկտրաքարշի տեխնիկական շահագործման էլեկտրատեխնիկ-մեխանիկին ներկայացվող պահանջներին համապատասխան:</p>
7.	Աշխատանքների բարդության աստիճանը	Միջին բարդության աշխատանքների կատարում կապված երկաթուղու էլեկտրաքարշի տեխնիկական շահագործման հետ:
8.	Մասնակցությունը գործընթացներում	Գործընթացներ՝ 1, 2, 3, 4, 5

Հ/Հ	Անվանումներ	Նկարագրերը
9.	Կրթության պահանջը	Միջին մասնագիտական